Հավելված N 7
ՀՀ կառավարության 2025 թվականի
դեկտեմբերի 25-ի N 1979 - Ն որոշման

ՑԱՆԿ
Ապահովագրական փաթեթի շրջանակներում առողջության առաջնային պահպանման ծառայություն իրականացնողին ուղղորդվող շտապ օգնության կանչերի

1. Առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպություններ ուղղորդվող կանչեր՝ մինչև 120 րոպեի ընթացքում սպասարկվող կանչեր (եթե կանչը ուղղորդվում է հերթապահության ավարտին, ապա սպասարկվում է հաջորդ աշխատանքային օրվա առաջին ժամերին).

1) առանց կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող ախտանիշների ուղեկցման, մինչև 38.5°C ջերմության պատճառով տրվող կանչերը,

2) հարբուխ, ռինիտ, տոնզիլիտ,

3) առանց կլինիկական արտահայտված ախտանիշների զարկերակային գերճնշում (զարկերակային ճնշման ցուցանիշը բարձր է 140/90),

4) քրոնիկական ընթացք ունեցող հոդացավեր, մկանացավեր,

5) քրոնիկական ալկոհոլիզմով և քրոնիկական այլ հիվանդություններով տառապող անձանց կրկնակի (մեկ օրվա մեջ) կանչերը՝ առանց նոր սրացած ախտանիշների,

6) նորագոյացություններով անձանց կողմից տրված կրկնակի կանչերը՝ առանց նոր սրացած ախտանիշների,

7) նույն ապահովագրված անձի վերաբերյալ նույն հասցեից նույն պատճառով կանչից հետո 24 ժամվա ընթացքում տրված հաջորդող կանչը, որոնց առաջին կանչի դեպքում չի արձանագրվել անհետաձգելի բժշկական օգնություն պահանջող իրավիճակ, եթե ապահովագրված անձի մոտ ի հայտ չեն եկել նոր կամ սրացված ախտանիշները:

8) նույն ապահովագրված անձի վերաբերյալ նույն հասցեից նույն պատճառով կանչից հետո 24 ժամվա ընթացքում տրված հաջորդող կանչը, եթե պացիենտը հրաժարվել է հոսպիտալացումից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

29.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ